Ես եւ Մարգարիտը միասին համբուրեցինք սուրբ մասունքները եւ այն օրից ուխտեցինք մնալ միմեանց հետ որպէս քոյր եւ եղբայր: Մարօն համբուրոեց Մարիամի եւ Մագթաղիհետ, իսկ մայրս պառաւ Խաթունի հետ, որ վերջացնելով իր գործը, եկել էր ժամ:

Տիրամօր վանքի ներսի կազմակերպութիւնը ունէր նոյն ձեւը, որը տեսնւում է այս կողմերում այն վանքերի մէջ, որոնց շինութեան հնութիւնը հասնում է մինչեւ հինգերորդ դարը, այսինքն՝ տաճարը բաժանուած է նախագաւիթից, որ կոչում են դարպաս: Ժողովուրդը կանգնած է դարպասի մէջ, իսկ տաճարում կատարւում է ժամերգութիւնը, այնպէս որ, հանդիսականները դպիրներին չեն տեսնում: Մի դուռ միայն տաճարից բացուած է դարպասի մէջ, որտեղից պատարագիչը երբեմն դուրս է երեւում, խորհուրդը կատարելու ծէսերին համաձայն:

Տաճարի մէջ կատարւում էր սուրբ սեղանի խորհուրդը. թէեւ պատարագիչը չէր երեւում, բայց ես իսկոյն նրա ձայնից ճանաչեցի վարժապետիս՝ տէր Թոդիկին: Թոյլ տալ մի օտարերկրեայ քահանայի պատարագ մատուցանել վանքի բեմի վրայ, այն եւս մի այնպիսի հանդիսաւոր օրում, դա մեծ շնորհ էր վանահօր կողմից դէպի տէր Թոդիկի անձնաւորութիւնը: Դա ունէր եւ իր նիւթական օգուտը, որովհետեւ, որքա՞ն բազմաթիւ ձեռքերից նա այնօր նուէրներ ընդունելու էր նրանց անունները սուրբ սեղանի վրայ «յիշելոէ համար...

Այս իրողութիւնը դարձրուց իմ առանձին ուշադրութիւնը դէպի տէր Թոդիկը:

Մի այլ երեւոյթ, որ ոչ սակաւ գրաւեց իմ ուշադրութիւնը, այն էր, որ այնտեղ, ուր բեմի վրայ շարած էին վանքի սրբութիւնները համբուրելու համար, վարդապետների թւում կանգնած էր մի քուրդ, եւ հսկում էր նուէրների վրայ, որ համբուրող ուխտաւորները ընծայում էին: Մի այլ քուրդ եւս նոյն պաշտօնով կանգնած էր տիրամօր գերեզմանի մօտ:

Ինձ ասացին, թէ քրդերը Հէյդար աղայի մարդիկն են, որոնք պահպանում են ուխտաւորներից նոիրուած արծաթը, որ վարդապետները անհաւատարիմ կերպով չվարոեն նրա հետ, եւ աղան կարողանայ ամբողջութեամբ ստանալ իր մասը, որ նշանակուած է նրա համար տօնի եկամուտից: Եւ ասացին, թէ ինքը Հէյդար աղան գտնւում է վանքում եւ վանահօր մօտ հիւր է: